THE FUTURE ARMENIAN

2024 ՏԱՐԵԿԱՆ ՀԵԿՈՒՅՑ

ՍԵՂՄԱԳԻՐ

2024 թվականը համայն հայության համար մարտահրավերներով լի ևս մեկ տարի էր: Միջազգային ու տարածաշրջանային չդադարող ցնցումները ևս մեկ անգամ ընդգծեցին մեր հավաքական ապագայի մասին այսօր մտածելու, փոխըմբռնում ձևավորելու ու միասին առաջ շարժվելու ուղիներ գտնելու խիստ անհրաժեշտությունը:

Ապագայի միասնական ճանապարհներ ձևավորելուց առաջ մենք որոշեցինք նախ հասկանալ, թե համայն հայությունն ընդհանուր առմամբ ինչ կարծիք ու դիրքորոշում ունի այս կամ այն խնդրի վերաբերյալ: Այդ նպատակով «ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» զարգացման հիմնադրամը 2024 թվականին կենտրոնացավ ամենատարբեր հարցերի շուրջ Հայաստանում և Սփյուռքում հանրային կարծիքը պարզելու վրա:

Ըստ այդմ, 2024 թվականին նախագծվեց ու գործարկվեց հարցումների ու քննարկումների Armagora հարթակը, որտեղ 5 ամսում անցկացվեց 16 հարցում՝ 9 առանձին հարցի, 7 թեմատիկ հարցաշարի ձևաչափով: Այնուհետև, Զրույցներ բաժնում նախաձեռնվեցին քննարկումներ տվյալ թեմաների շուրջ: Բարձրացված հարցերի, դրանց առնչվող ավելի լայն խնդիրների վերաբերյալ կազմակերպվեցին «Արի՛ խոսենք» խորագրով 10 ուղիղ հարց-պատասխաններ մասնագետների հետ՝ քվեարկություններն ու քննարկումները ուղղորդելով դեպի գիտական, հիմնավորված ու բովանդակային բանավեճերի դաշտ: Զուգահեռաբար հրապարակվեցին մասնագիտական վերլուծություններ ու հոդվածներ՝ խթանելով տվյալ թեմայի վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը:

Մեր հարցումներին ու քննարկումներին արդեն մասնակցում են հազարավոր հայեր մոտ 4 տասնյակ երկրից: Հասկանալով, թե ինչ ենք կարծում, ինչ ենք ուզում և ինչպես ենք պատկերացնում մեր առջև ծառացած խնդիրների լուծումները՝ մենք փորձում ենք միասին ձևավորել բոլորիս դեպի ավելի լավ ապագա տանող կայուն ու կանաչ ճանապարհներ:

1 ՄԵՐ ՏԵՍԼԱԿԱՆԸ

«ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» նախաձեռնությունը նպատակ ունի ստեղծել փոխըմբռնման ընդհանուր շրջանակ Հայաստանի՝ որպես երկրի և հայերի՝ որպես ազգի կայուն զարգացման համար: Նախաձեռնությունը ձգտում է ապագայի կերտմանը միտված 15 նպատակների շուրջ համախմբել հայերին և Հայաստանի բարեկամներին:

2 ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Մենք ձգտում ենք ձևավորել մի հարթակ, որի միջոցով կկարողանանք հաղթահարել հայության բևեռացումը, կվերացնենք հուսահատության մթնոլորտը, կկարողանանք ձևակերպել համակարգային լուծումներ, կվերակտիվացնենք հասարակությունը և կօգնենք մարդկանց պատասխանատվություն ստանձնել երկրի ու ապագայի հանդեպ:

3

15 ՆՊԱՏԱԿՆԵՐ


1
Տեսլականի սահմանում

2
Երաշխավորված պետականություն

3
Պատմական պատասխանատվություն

4
Ազատ Արցախ

5
Հայաստան-Սփյուռք միասնականություն

6
Ուժեղ սփյուռք

7
Ուժեղ դաշինքներ

8
Հարաճում

9
Բնակչության աճ

10
Կրթության գերազանցություն

11
Գիտության, տեխնոլոգիաների և ստեղծագործականության գերակայություն

12
Ողջամիտ կառավարում

13
Արդար հասարակություն և նվազեցված անհավասարություններ

14
Ժառանգության պահպանում

15
Փաստերի վրա հիմնված որոշումների կայացում

4 «ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» ԱՄՓՈՓԵԼՈՎ 2024-Ը

Համահայկական ամենաառանցքային խնդիրների շուրջ ընդհանուր պատկերացում ձևավորելու, դրա հիման վրա համատեղ լուծումներ մշակելու մեր առաքելության ճանապարհին 2024 թ. մենք կենտրոնացանք «ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» Նախաձեռնության 15 նպատակներից երեքի վրա՝

Որոշվեց առաջին հերթին կենտրոնանալ այս երեք Նպատակների շուրջ հանրային կարծիքի ուսումնասիրման վրա՝ փորձելով վերհանել ամենատարբեր հարցերի վերաբերյալ համայն հայության պատկերացումները:

5 ARMAGORA: ՆԱԽԱԳԾՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱՐԿՈՒՄ

Այդ նպատակով նախագծվեց և ստեղծվեց Armagora համահայկական հարցումների ու քննարկումների հարթակը: Անվանումը ծագում է Հին Հունաստանում հայտնի ἀγορά-ից՝ ժողովրդական ժողովից, որը ծառայում էր որպես քաղաքացիների քննարկումների հավաքատեղի:

Armagora-ում քննարկվում են պատմական այս դժվարին փուլում աշխարհասփյուռ հայությանը հուզող ամենաարդիական հարցերը, ինչպիսիք են անվտանգային ճգնաժամը, Հայաստան-Սփյուռք հարաբերությունները, կառավարման որակի բարձրացումը, պետականության պահպանումն ու ամրապնդումը՝ միասին գտնելով լուծումներ ավելի կայուն ապագա կառուցելու համար: Սա պահանջում է խոսել իրար հետ, լսել ու փորձել հասկանալ միմյանց:

Մենք հավատում ենք, որ միայն կառուցողական երկխոսությամբ ու միայն միասին կարող ենք գտնել լուծումներ՝ երաշխավորելով ավելի կայուն ու լուսավոր ապագա Հայաստանի և հայության համար: Մենք ողջունում ենք առողջ քննարկումները և չենք հանդուրժում ատելությունն ու վիրավորանքը:



6 ARMAGORA ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Կարևորելով բովանդակային քննարկումների ու որոշումների կայացման մշակույթը՝ մենք ձգտում ենք՝

Բարձրացնել համահայկական երկխոսության որակը

Լույս սփռել Հայաստանում և Սփյուռքում հայությանը միավորող ճգնաժամերի և մարտահրավերների վրա

Վերհանել դրանց նկատմամբ հանրային տրամադրությունները և ձևավորել հայեցակարգեր՝ որպես այդ խնդիրների լուծման արդյունավետ միջոց:

Փնտրել լուծումներ, արմատավորել իրար հարգելու և այլ կարծիքի հետ համամիտ չլինելով դրա գոյության իրավունքն ընդունելու մշակույթ:

7 ARMAGORA ՀԱՐԳԱՑՈՒՄ

Գործարկելով մեր հարթակը օգոստոսի 1-ին՝ մենք սկսեցինք հրապարակել շաբաթական երկու հարց: Միաժամանակ, տվյալ թեմայի շուրջ քննարկում ծավալելու համար նախաձեռնեցինք զրույցներ կայքի համապատասխան բաժնում: Հրապարակեցինք նաև հոդվածներ ու այլ նյութեր քննարկումները բովանդակային և տեղեկացված դարձնելու համար:

Այնուհետև, գնահատելով առաջին երկու ամիսների արդյունքները, հանգեցինք եզրակացության, որ հարցումներն ու քննարկումներն ավելի արդյունավետ դարձնելու համար հարկ է որդեգրել հետևյալ սկզբունքը. հարցումները դարձնել ավելի համապարփակ՝ ամսական 2-3 անգամ հրապարակելով 5-8 հարցերով հարցաշարեր որևէ թեմայի վերաբերյալ: Դրան հաջորդեցին արդեն փորձագիտական զրույցներ. հրավիրվեցին մասնագետներ, որոնք ուղիղ եթերում պատասխանեցին օգտատերերի հարցերին՝ միաժամանակ մեկնաբանելով իրենց ոլորտին առնչվող քվեարկության արդյունքները: Մենք սկսեցինք նաև հրապարակել հոդվածներ, որոնք հիմնվեցին քվեարկությունների արդյունքների և փորձագիտական գնահատականների վրա:

Այսպես ձևավորվեց եռաստիճան ցիկլը՝ հարցում-զրույց/փորձագետի գնահատական-հոդված:

16 ՀԱՐՑՈՒՄ → **147** ԶՐՈՒՅՑ → **52** ՀՈԴՎԱԾ



8 ARMAGORA ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

Գրեթե ամեն շաբաթ մշակվում ու հրապարակվում է հարցաշար որևէ թեմայի վերաբերյալ: Հարցումները բաց են բոլորի համար և որևէ գրանցում չեն պահանջում: Հարցաշարերի ստեղծմանը մասնակցում են տվյալ ոլորտի մեկ փորձագետ և պրոֆեսիոնալ հարցումներ անցկացնող համապատասխան մասնագետ: Միևնույն ժամանակ, հարցումները գիտական բնույթ չեն կրում և վիճակագրորեն ներկայացուցչական չեն: Դրանց նպատակը հանրային քննարկումներ խթանելն ու հանրության իրազեկվածությունը բարձրացնելն է:

Անվտանգություն
պաշտպանություն
ինքնիշխանություն
Երրորդ հանրապետություն
Սփյուռք
կրթություն
առողջապահություն
տեխնոլոգիաներ
մշակույթ

15,000+
ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

16 ՀԱՐՑՈՒՄ, ՈՐԻՑ 9 ԱՌԱՆՁԻՆ ՀԱՐՑ,
7 ԹԵՄԱՏԻԿ ՀԱՐՑԱՇԱՐ

Ամենապահանջված հարցման թեման՝
«ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ. ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ» 1200+ ՄԱՍՆԱԿԻՑ

Ամենապահանջված հարցը՝
«Ո՞ՐՆ Է ՁԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ» 1700+ ՄԱՍՆԱԿԻՑ

9 ARMAGORA ՁՐՈՒՅՑՆԵՐ

Հարցումների շուրջ բովանդակային քննարկումներ խթանելու, և՛ հանրության, և՛ տվյալ ոլորտի մասնագիտական կարծիքները շրջանառելու նպատակով հարցումների թեմաներն ու դրանց արդյունքները դրվեցին քննարկման Ձրույցներ բաժնում, որտեղ ցանկացած ոք կարող է ինքնուրույն նախաձեռնել քննարկումներ նաև այլ հարցերի շուրջ:

Ամենաուշագրավ քննարկումները ծավալվեցին ԱՄՆ նախագահական ընտրությունների, Ադրբեջանում անցկացված COP29-ի, Հայաստան-Սփյուռք հարաբերությունների վերաբերյալ:

147

ՁՐՈՒՅՑՆԵՐ



9 ARMAGORA: ԶՐՈՒՅՑՆԵՐ

Եվ այդ քննարկումները տեղեկացված ու հիմնավորված դարձնելու նպատակով գործարկեցինք «Արի՛ խոսենք» խորագրով զրույցների շարք տվյալ ոլորտի մասնագետի հետ, որն ուղիղ եթերում նախ վերլուծում էր իր ոլորտին առնչվող հարցումների արդյունքները, որից հետո՝ պատասխանում հարթակի գրանցված օգտատերերի հարցերին:

ԱՐԻ՛ ԽՈՍԵՆՔ

10 ՈՒՂԻՂ ՄԻԱՑՈՒՄ



Հայկական ընտանիքից լավ բան չկա. դա մեր գաղտնի զենքն է

Էնթոնի Բարսամյան



Պետք է ավելի դրական նայենք մեր ապագային

Կարինե Սարգսյան

Ապագայի հայը նա է, որը որոշում է այլևս չլինել մազապուրծ

Էդուարդ Աբրահամյան

10 ARMAGORA ՀՈԴՎԱԾՆԵՐ

Քննարկումները բովանդակային դարձնելու, տվյալ թեմայի վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով հարթակում գործում է Հոդվածներ բաժինը, որտեղ հրապարակված են տարբեր փորձագետների ու կազմակերպությունների իրականացրած հետազոտություններ ու վերլուծություններ, այդ թվում՝ մեր հարցումների արդյունքների ու հրավիրված փորձագետների մեկնաբանությունների հիման վրա ամփոփիչ նյութեր:

52 ՀՈԴՎԱԾՆԵՐ

Փոքր պետությունները ևս կարող են լինել նույնքան հավակնոտ և ագրեսիվ, որքան մեծերը:

Էդուարդ Աբրահամյան

Պատերազմն ու խաղաղությունը փոքր պետությունների միջև մրցակցային բազմաբևեռ դարաշրջանում



Էներգետիկ ողջամիտ գործընկերությունները դիտարկելու պատրաստակամությունը զուգակցվում է ռազմավարական ակտիվների շուրջ կարմիր հստակ գծերի պահպանմամբ:

Ռաֆֆի Էլիոտ

Despite concerns, Armenians see Nuclear as an integral part of the country's future sustainable energy mix



Հայաստանի Հանրապետության ստեղծումը հայերի ազգային հպարտության հիմնաքարերից մեկն է:

Ռաֆֆի Էլիոտ

Strong Sovereignty and Unity At Home: Armenians' expectations from The Third Republic

11 ARMAGORA ԼՐԱՏՎԱԲԱՆՈՒՄ

Armagora.am հարթակին անդրադարձել են տարբեր լրատվամիջոցներ Հայաստանում և Սփյուռքում՝ հայտնելով հարթակի գործարկման մասին: Ավելի ուշ, 50-ից ավելի լրատվական կայքերում հրապարակվել են հարցումների պաստառներ՝ խրախուսելով մասնակցել ու միանալ համահայկական քննարկումներին:

Ինչպե՞ս եք վերաբերվում Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի բացման հեռանկարին:

Մասնակցիր շաբաթվա հարցմանը

armagora

Որքանո՞վ եք կարողանում կառավարել սթրեսը:

Մասնակցիր շաբաթվա հարցմանը

armagora

Կանայք ու աղջիկները պե՞տք է ծառայեն ՀՀ Զինված ուժերում

Մասնակցիր շաբաթվա հարցմանը

armagora

1.6մլն
ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

7.7մլն
ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հարցումները Հայաստանում և Սփյուռքում ակտիվ տարածելու, մասնակցել խրախուսելու գործում հատուկ ուշադրություն է դարձվել սոցցանցերին: Հարցումները հատկապես բուռն քննարկումների առիթ են դարձել Facebook-ում, որտեղ որոշ դեպքերում գրանցվել են հարյուրավոր մեկնաբանություններ:

ARMAGORA
Ո՞Ւ ԵՆՔ ԳՆՈՒՄ

Առաջիկայում մեր աշխատանքը առավելապես միտված է լինելու համահայկական նշանակության առանցքային և հրատապ թեմաների շուրջ հանրային խոսույթի ձևավորմանը և բանավեճերի խթանմանը, որը կնպաստի բազմակողմանի քննարկումների անցկացմանը և որոշումների կայացման գործընթացում տարբեր կողմերի ներգրավմանը:

2025 թվականին ձգտելու ենք ընդլայնել համահայկական քննարկումներին մասնակցողների շրջանակը՝ գործարկելով կարծիքների ու մասնագիտական վերլուծությունների հանրայնացման նոր ձևաչափեր՝ շարունակելով ձևավորել փոխըմռնման շրջանակ առանցքային խնդիրների ու դրանց լուծումների, տարբեր ուղղություններով ապագան միասին կառուցելու ուղիներ նախանշելու համար: